


ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

**ԳՐԻԳՈՐ ԱՐԿԱՂԻԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆՑ**  
(ծննդյան 80 – ամյակին)



Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Նախագահության, Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունքի և Երկրաբանական գիտությունների ինստիտուտի կողմից ջերմորեն շնորհավորում ենք նավթի և գազի երկրաբանության ասպարեզում ճանաչված գիտնական, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ և պատվավոր դոկտոր, Ռուսաստանի Բնական գիտությունների ակադեմիայի անդամ, Արցախի մեծ բարեգործ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Արկաղիի Գաբրիելյանցի ծննդյան 80-ամյա հոբելյանը:

Գ.Գաբրիելյանցը ծնվել է 1934թ. փետրվարի 2-ին, Բաքվում: 1956-ին ավարտել է Ադրբեջանի ինդուստրիալ ինստիտուտը: Նրա երկարամյա, բազմաբովանդակ գործունեությունը ընդգրկում է երկրաբանական գիտության, արտադրության, կրթության և պետական կառավարման տարբեր ոլորտներ:

Գ.Գաբրիելյանցի առաջին երկրաբանական հետազոտությունները, նվիրված նավթի և գազի կուտակումների որոնման, հետախուզման և հայտնաբերման հարցերին, իրականացվել են սկսած 1950-ական թվականների կեսերից Թուրքմենական ԽՍՀ Երկրաբանական վարչության արշավախմբի, այնուհետև՝ վարչության գլխավոր երկրաբանի պաշտոններում: 1963թ. նա հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական և 1973թ. դոկտորական ատենախոսությունները նվիրված տարբեր երկրաբանական կառույցներում նավթի և գազի կուտակումների առաջացման տեսական հիմունքներին և պրակտիկ որոնողական աշխատանքներում կիրառվելիք մեթոդաբանական մոտեցումներին:

Հետագա տարիներին, երկրաբանական հետազոտությունների հետ մեկտեղ, Գ.Գաբրիելյանցը զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ Մոսկվայի տարբեր առաջատար բուհերում, ապա լայնածավալ գիտական հետազոտություններով և գիտակազմակերպչական աշխատանքով: 1965-1989թթ. նա վարել է Համամիութենական

նավթային երկրաբանահետախուզական գիտահետազոտական ինստիտուտի բաժնի վարիչի, ապա “Սոյուզգեոֆիզիկա” և “Նեֆտեգեոֆիզիկա” միավորումների գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնները, իսկ 1987-1989թթ. եղել է վերը նշված գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն:

1989–1991թթ., Գ.Գաբրիելյանցը, որպես ԽՍՀՄ Երկրաբանության նախարար, ղեկավարել է երկրի ողջ երկրաբանական ծառայությունը, երկրի կազմալուծումից հետո՝ 1992-2011թթ. գլխավորել է “Գեոսերվիս” միջազգային գիտատեխնիկական-խորհրդատվական ընկերությունը:

Գ.Գաբրիելյանցի գործունեության զգալի մի հատված նվիրված է եղել նաև լայնածավալ խորհրդատվական գործունեությանը, կապված տասնյակից ավելի երկրներում՝ Հնդկաստանում, Կուբայում, Չինաստանում, Լեհաստանում, Եթովպիայում և ուր., իրականացվող նավթի և գազի որոնողական և հետախուզական աշխատանքների կազմակերպման խնդիրներին:

Գ.Գաբրիելյանցը հեղինակ է շուրջ 160 գիտական հոդվածների, 7 մենագրությունների ու 2 դասագրքերի, նվիրված նավթի և գազի երկրաբանության գիտական հիմունքների մշակման, պաշարների որոնման և հետախուզման հարցերին: Նա համարվում է Կարակումի և Աստրախանի գազի խոշոր հանքավայրերի հայտնաբերող:

Գ.Գաբրիելյանցի երկարամյա և բազմակողմանի գիտական ու պրակտիկ գործունեությունը լայն ճանաչում են բերել նրան նախկին ԽՍՀՄ-ում և նրա սահմաններից դուրս: Նրա բազմամյա և բեղուն գործունեությունը նշանավորվել է բազմաթիվ կառավարական պարգևներով, մրցանակներով և շնորհակալագրերով, այդ թվում՝ “Պատվո նշան” շքանշանով, ԽՍՀՄ պետական մրցանակով և “Բիրմինհեմի ջահ” միջազգային մրցանակով, ՀՀ “Անանիա Շիրակացի” մեդալով և այլն:

Հատուկ հարգանքի ու մեծարման է արժանի Գ.Գաբրիելյանցի, որպես բարեգործի, զգալի ազգանվեր ավանդը, նպատակաուղղված հայ մշակութային արժեքների պահպանման և հանրության իրազեկման հարցերին: Նրա անմիջական նախաձեռնությամբ և աջակցությամբ Մոսկվայում հրատարակվում է «Առագաստ» հայանպաստ ժողովածուն, Պյատիգորսկում կառուցվել է Սուրբ Մարգրիտ եկեղեցին և այլն:

Վերջին տարիներին բնակություն հաստատելով հայրենի Արցախում, Գ.Գաբրիելյանցն իր գիտելիքներն ու կարողությունները մեծ նվիրումով ծառայեցնում է ԼՂՀ ընդերքի հարստությունների լայնածավալ ուսումնասիրման և տնտեսության զարգացման խնդիրների լուծմանը: Մասնավորապես, 2011թ. նրա աջակցությամբ և մասնակցությամբ և ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի մի խումբ գիտնականների ուժերով կազմվեց և հրատարակվեց “Լեռնային Ղարաբաղի հանրապետության երկրաբանությունը և հանքային պաշարները” աշխատությունը /ռուսերեն լեզվով/, որում ամփոփված և

վերծանված են տարածքի երկրաբանական նոր տվյալներ և հանքային պաշարների արդի վիճակի մասին համառոտ տեղեկություններ:

Գ.Գաբրիելյանցի անմիջական ջանքերով Արցախում ստեղծվել է մեծ արժեք ներկայացնող պատկերասրահ, որտեղ ցուցադրված են հայ, ռուս և եվրոպացի մեծանուն վարպետների նշանավոր գործեր: Բացվել է նաև մեծ ճանաչողական հետաքրքրություն ներկայացնող երկրաբանական թանգարան, որի հիմքում դրված է տարբեր միներալների և ապարների նրա անձնական հարուստ հավաքածուն: Այս ամենը նպատակամղված է արվեստի հանրաճանաչ գործերը Արցախի ժողովրդին հասանելի դարձնելուն և միաժամանակ՝ Արցախի մշակութային արժեքները միջազգային հանրությանը ներկայացնելուն:

Կրկին անգամ ջերմորեն և սրտանց շնորհավորելով Գ.Գաբրիելյանցին ծննդյան 80-ամյա հոբելյանի առիթով, մաղթում ենք քաջառողջություն, բազում նպատակների իրագործում և ամենայն բարիք:

**ՀՀ ԳԱԱ Նախագահություն**  
**Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունք**  
**ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ**  
**ՀՀ ԳԱԱ “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրի խմբագրություն**